



### Գենդերային հավասարություն

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ճանաչում է կանանց և տղամարդկանց հավասարությունը: Անթույլատրելի է խտրականությունը որևէ հիմքով: Յուրաքանչյուր պետություն պետք է համապատասխան պայմաններ ստեղծի, որպեսզի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ապահովի կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը: Գենդերային հավասարությունը, որը մարդու իրավունքների անբաժանելի մասն է, ենթադրում է սեռերի հավասարություն, կանանց և տղամարդկանց իրավունքը հավասար մասնակցելու քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման գործընթացներին և հավասարապես օգտվելու հասարակական բարիքներից, հնարավորություններից և ռեսուրսներից:



### Կինը և սեփականությունը

Վրաստանի Սահմանադրությամբ, կանայք և տղամարդիկ հավասար են, և նրանք ունեն միանման իրավունքները: Նրանց իրավահավասարությունը տարածվում է բոլոր ոլորտների վրա, այդ թվում նաև սեփականության վրա: Սեփականության հավասար իրավունքը պաշտպանված և ճանաչված է օրենքով: Օրենքը տարբերակում է ամուսինների անհատական և ընդհանուր սեփականությունը:

**Անհատական** է ամուսիններից յուրաքանչյուրի այն սեփականությունը, որը պատկանել է նրան մինչև ամուսնությունը, ինչպես նաև այն է, որ ամուսնության ընթացքում ստացել են ժառանգաբար կամ որպես նվեր:

Ամուսինների **ընդհանուր սեփականություն** է այն ամենը, որ նրանք ձեռք են բերել ամուսնության ընթացքում: Պետք է նշել, որ հաճախ, ամուսիններից մեկն աշխատում է և պահում ընտանիքը, իսկ մյուսը զբաղվում է ընտանեկան գործերով, խնամում երեխաներին և չունի ինքնուրույն եկամուտ: Այդ դեպքում ևս, թեկուզ միայն մեկ ամուսնու եկամտով ձեռք բերված գույքը համարվում է ընդհանուր սեփականություն:



### Բռնություն

**Ընտանեկան բռնությունը** ընտանիքի անդամներից մեկի կողմից մյուսի իրավունքների ու ազատությունների խախտումն է ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական բռնությամբ կամ հարկադրանքով:

**Ֆիզիկական բռնություն** - ծեծք, խոշտանգումը, առողջության վնասումը, անօրինական ազատագրկումը, կամ այլ որևէ գործողություն, որը հանգեցնում է ֆիզիկական ցավի կամ տառապանքի:

**Հոգեբանական բռնություն** - անարգանք, շանտաժ, նվաստացում, սպառնալիք կամ որևէ այլ գործողություն, որը ոտնահարում է մարդու պատիվն ու արժանապատվությունը:

**Տնտեսական բռնություն** - գործողություն, որը հարուցում է սննդով, բնակարանային և այլ պայմաններով ապահովման, սեփականության և աշխատանքային իրավունքների իրականացման, ինչպես նաև համասեփականության մեջ եղած գույքից օգտվելու և հասանելիք բաժնի տնօրինման իրավունքի սահմանափակում:

**Սեռական բռնություն** - սեռական հարաբերություն բռնության միջոցով, բռնության սպառնալիքով կամ զոհի անօգնականության չարաշահմամբ: Սեռական հարաբերություն կամ սեռական բռնության այլ գործողություն կամ անբարոյական գործողություն անչափահասի դեմ:

**Հարկադրանք** - մարդու ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում՝ կատարելու կամ չկատարելու որևէ գործողություն, որի կատարումը կամ որից ձեռնպահ մնալը իր իրավունքն է, կամ սեփական անձի հանդեպ զգում է իր կամքին և ցանկությանը հակառակ ներգործություն:



## Նախագծի մասին

«Սահմանադրության 42-րդ հոդված» հասարակական կազմակերպությունն իրականացնում է նախագիծ «Կանանց, հատկապես էթնիկ փոքրամասնությունների խմբին պատկանող կանանց հզորացում և արդարադատության մատչելիության օժանդակում», որի նպատակն է կանանց իրավական հզորացումը և նրանց իրավունքների մասին իրազեկության բարձրացումը: Նախագիծը ֆինանսավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, Արևելք-Արևմուտք կառավարման ինստիտուտի (EWMI) «Օրենքի գերակայությունը Վրաստանում» ծրագրի (PROLoG) շրջանակներում:

Ծրագիրը կիրականացվի Վրաստանում, մասնավորապես, Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի հետևյալ մունիցիպալիտետներում՝ Ծալկա, Թեթրիժղարո, Նինոծմինդա, Ախալքալաք և Ախալցխա:

Նախագծի շրջանակներում, «Սահմանադրության 42-րդ հոդված» կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Ռազմավարական վարույթների իրականացում:
- Առկա իրավիճակի բարելավում և արդարադատության մատչելիության առկա խոչընդոտների նվազեցում:
- Մեփական փորձի վերլուծության հիման վրա կանանց իրավական վիճակի մասին վերլուծության պատրաստում:
- Վարժանքների շարքի անցկացում, որոնց հրավիրված կլինեն նախագծի շահառու կանանց խմբի ներկայացուցիչներ:


Նախագծի շահառուներն են կանայք, հատկապես էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանայք, ովքեր ենթարկվում են գենդերային հիմքով խտրականության, գույքային իրավունքների խախտման, սեռական ոտնձգությունների, ընտանեկան բռնության և այդ ոլորտներում իրավական օգնության կարիք ունեն: Նախագծի շրջանակներում շահառուներին կտրամադրվի անվճար իրավաբանական օգնություն ինչպես խորհրդատվությունների, այնպես էլ ներկայացուցչության իրականացման միջոցով:

## Ձեր իրավունքների խախտման դեպքում կապվե՛ք մեզ հետ

(+995 32) 2998856



Կազմակերպություն՝ Սահմանադրության 42-րդ հոդված  
 Հասցեն՝ Քանթարիայի 11ա, 0160 Թբիլիսի  
 Հեռ./ֆաքս՝ (+995 32) 2998856  
 Էլ-փոստ՝ office@article42.ge  
 Կայքէջ՝ www.article42.ge  
 Facebook: www.facebook.com/article42



Գրքուկը հնարավոր է դարձել պատրաստել Ամերիկայի ժողովրդի աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) միջոցով տրամադրվող օժանդակությամբ: Գրքուկի բովանդակության համար պատասխանատու է «Սահմանադրության 42-րդ հոդված» կազմակերպությունը: Գրքուկի բովանդակությունը կարող է չարտացոլել USAID-ի և ԱՄՆ Կառավարության կամ Արևելք-Արևմուտք կառավարման ինստիտուտի տեսակետները:

This brochure is made possible by the support of the American People through the United States Agency for International Development (USAID). The contents of this brochure are the sole responsibility of the Article 42 of the Constitution and do not necessarily reflect the views of EWMI, USAID or the United States Government.



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

EAST · WEST  
MANAGEMENT  
INSTITUTE  
Promoting Rule of Law  
in Georgia (PROLoG)

Կանանց, հատկապես էթնիկ փոքրամասնությունների խմբին պատկանող կանանց հզորացում և արդարադատության մատչելիության օժանդակում

**ԻՄԱՆԱՆՔ ՄԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**



**Սահմանադրության 42-րդ հոդված**

2016 թվական